255

255

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Անցից որ եղև ՚ի Կոստանդնուպօլիս վս
յայտնի կացուցանելոյ զճշմարտութիւն
հաւատոյ հայաստանեայց սբ Եկեղեցւոյ՝
այնոցիկ, որոց չէինն տեղեակ և
մեղանչէին.

՚Ի Հայրապետութեան Առաքելական Սբյ
Գահին Էջմիածնի Տն Եփրեմ Սրբզն
Կաթուղիկոսի ամ Հայոց.

Եւ ՚ի Պատրիարգութե Սբյ Երմ Տն
Թէոդորոսի արհիապանծ Եպսի.

Տպեալ.

Հրամանաւ Կոստանդնուպօլսոյ Պատ-
րիարգի Տն Պօղոսի Արհի Եպսի
Անդրիանուպօլսեցւոյ.

Յամի Տն 1818. փետրվարի 15.
՚Ի Կոստանդնուպօլիս.

՚Ի Տպարանի Մայր սբ Ածածնի, ՚ի ձեռն
Տպագրիչ Անդրէաս Մուրատեան
Ակնեցւոյ.

Ա

4662-ատ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ Арм. ССР
им. А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3/309-64



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ընծայից որ եղև 'ի Կոստանդնուպօլիս վն յայտնի նշա-
ցանելոյ ճշմարտութեն հաւատոյ հայաստանեայց Սբ Լուսէ-
ւորչեայ՝ տոհմայէն, որոց չէինն հնազանդ և ժխտէին:

Յառաջաբան:

Ճշմարտութի հաւատոց՝ լոյս է աչաց մտացն շարժմանց, ասէ ամեներանել Հայր մեր Սբ Գրիգոր Լուսաւորչն· յաճախ'' ճառ Գ: առ որ և Տէրն զգուշացուցանէ զմեզ ասելովն՝ Զգոյշ լեր՝ գուցէ լոյսդ որ 'ի քեզ է, խաւար իցէ· Ղուկ․ ԺԱ, 35: Նաև առ այս ձանձպարհ ցուցանէ զճշմրտութին, ասէ՝ որ առնէ զճշմարտութի գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործ․ք նր, թէ այ գործեցան․ Յոհ․ ԺԲ, 46: Նաև քանզի ինքն անստեղծ լոյս էր, և զայս ամենեցին լոյս ծագեաց յաշխ․ ասէ՝ Ես լոյս՝ յաշխ եկի․ զի ամ՝ որ հաւատայ յիս, 'ի խաւարի մի՛ մնասցէ․ Յոհ․ ԺԲ․ 46: Նաև զաշակերտս իւր լոյս անուանէ յասելն՝ դուք էք լոյս աշխի․ ․ ․ և ո՛չ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ․ այլ 'ի վր աշտանակի, և լոյս տայ ամենեցուն՝ որ 'ի տանն իցեն․ Մատթ Ե 14․ 15: Նաև ոչ զլոյս պայծառ և յայտնի զբարի գործս ունել հրամայէ



ամե-

մթենեցուն ։ Որպէս լուսաւորեսցէ լոյս ձեր ա-
ռաջի մարդկան. որք զի տեսցեն զգործս ձեր բարիս
և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է.
Մատթ. Ե 16։ Ուստի ը̄ այսց անշուշտ պատգամացս՝
հարկ է ա̄մ անձին ունել անաղօտ զայս լոյս՝ ըղ
ճշմարտութ̄ հաւատոց ՚ի փրկութ̄ հոգւոց իւրոց,
իսկ զրկեալն յայսմ լուսոյ խաւարասէրն սատանայ
հանապազօր ջանայ և զորդիս լուսոյ ածել ՚ի խա-
ւար և ՚ի գայթակղութ̄ի. և ոմանք որբունեալք նորին
և պաշտօնատարք՝ հակառակ կացեալ ընդդէմ յատուկ
բարերարին՝ սեփհական ծնողին՝ հոգևոր Հօվուին.
այլ ընդ այլոյ վարդապետութ̄բք. իբրև քնով դանդա-
չեալք զհրուն̄ս քամահեն, զփառս հայհոյեն. ամպք
անջրդիք հողմակոծեալք անսաստ ալիք ծովու. որ
միշտ փրփրեն զիւրեանց զամօթ. Յուդ.
ա̄. 8. 12. 13. զբուն հարազատ բարունակս յոր-
մատոյ Սուրբ Լուսաւորչին փշրեալ բաժանե-
լով՝ զրկեն ՚ի պտղաբերութ̄է շնորհաց գլխոյն։ և որ
անտանելին է՝ զիր̄աւունս Ս̄ե Լուսաւորչին արհամար-
հելով։ Նաև այս բազում ժամանակօք յառաջ քան
զմեզ սերմանեալ է սղնյական որոմն ՚ի միտս ո-
մանց յեկեղեցւոյ մերմէ բաժանելոց՝ յատելութ̄ի
յաւէտ կրթեալ չիաս մեծ գործէին մինչև ՚ի
մահ. և այս առանց իղձի. և համարին Աստուծոյ
հաճելի պաշտօն մատուցանել. և կարծեն յաղ-
թանակ առնուլ յԱ̄յ զվարձս բարիս։ զի աւեն
վ̄ս ուղղափառ հաւատոյ հաստատութեան առ-
նեմք զայսոցիկս։ Ով մտացի դու՝ հակառակ
ք̄ի ընտրութ̄են գործես, և յուսաս ընտիր երևիլ.
քանզի Ք̄ս ասէ։ Ես ընտրեցի զձեզ և եդի զձեզ,



զի

զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցէք , և պտղ
տուղն ձեր կացցէ ։ Յով․ ԺԵ 16 ։ Եւ կրկնեալ և ասէ,
զինչ է պտուղ գործոյդ , Քրիստոս հրամայէ՝ Զ այս պատ
ուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս ։ Յով․ ԺԵ, 17 ։ դու
զատելութի քարոզելով՝ զքահանայսն և զբաժանումն
ազգիս՝ հաստատութի համարիս ։ Քրիստոս աղօթելով առա
չէ առ Հայր վն՛ ամ հաւատացելոց, թէ եղիցին մի ․ որպ
և մեք մի եմք ։ դու աշխատիս, զի Քրիստոսի աղօթքն ՚ի
քէն հեռի եղիցին ․ և ընդդէմ կամացն Քրիստոսի ջա
նաս, քակես և բաժանես զմիութի ազգիս ․ այս է
հնարք սատանայի, որով զբաղումս որսայ ՚ի կորուստ ։

## ՊԱՏՃԱՌ․

Է․ Արդ՝ զայս ամենայն՝ անհնարին եղև մեզ լսել․
մանաւանդ զի յամ քաղաքաց աղաղակք և բողոքք
հասանէին առ մեզ գրելով թէ ոմանք ՚ի նորցանէ նա
խատեն զեկեղեցիս մեր՝ գամանուանելով ․ մինչ զի
ոչ տան զներողութի պատահմամբ մտանողացն , և
պատուիրեն՝ ընդ անցանելն ՚ի փողոցէ եկեղեցւոյ
դարձուցանել զերեսս ․ և զեկեղեցականս մեր կո
չեն խաբեբայս և ստասացս ․ և որ սարսափելին է՝
յանսասելի հայհոյութիս յանդգնիլ ընդդէմ ահա
ւոր խորհրդոյ Մարմնոյ և Արեանն Տն ։ Նաև քանզի ՚ի բազում քաղաքս եպարքոսաց և այլ իշխողաց
ծանօթք այժմ ՚ի միւս կողմն դառնեն , նեղեն և
չարչարեն զլուսաւորչադաւան ժողովուրդս մեր ․
համարձակ շրջեցուցանեն զնորեանց խորանիս ․ և
զպարզամիտ ժողովուրդս հանեն ՚ի հնազանդու
թենէ սեփհական հովուէին ․ և զբազմաց զորդիս
որոշեն ՚ի ծնողաց իւրեանց ․ զեղբայր յեղբօրէ
բաժանեն ․ զկին յառնէ իւրմէ օտարացուցանեն ,
և այլն ։ և զորս միանգամ որսան՝

խրատեն խապառ հեռանալ 'ի հաղորդութենէ ուղղա֊
փառ եկեղեցւոյ հայոց։ Այս ամ առնեն ազ֊
գի աղէտի շողոքորթութբ՝ ոմանց դրամս տալով, ո֊
մանց ձեռնտուութբ իւրեք օգնելով. և բազմաց
զլայն և զընդարձակ ճանապարհ ցուցանեն 'ի կո֊
րուստ մարմնոյ հեշտութեանց, և այլն։ Նաև այսպէս յա֊
ծեալ ընդ ծով և ընդ ցամաք՝ յորժամ առնեն ե֊
կամուտ մի, տօն ցնծութե և ուրախութե կատարեն
'ի միջի իւրեանց ասելով՝ զհոգի մի ազատեցաք. և
'ի հարցանելն 'ի մէնջ, թէ զինչ գործէք, ասեն
զինչ մաս գործեցաք, 'ի հաւատս բերաք, ով
թէ յառաջագոյն անհաւատ ոմն ծառը առնելով։
Նաև զայս ոչ միայն առ աշխարհականս, այլև առ
եկեղեցականս առնեն որսալ, տեղի և տուն ապա֊
ւինի ապստամբաց եղեալ. վս զի՝ ոմանք 'ի մերոց
ազգաց և ապստամբելոց 'ի մէնջ, յանդիմանելը
վս անկարգ գնացից իւրեանց վաղվաղակի գիշե֊
րագնաց փախչին 'ի մէնջ 'ի միւս կողմն, և ազատ
'ի հրամանաց մեծաւորաց՝ և ուխտազանց 'ի կրօ֊
նաւորական կարգաց բնակին 'ի տունս աշխարհա֊
կանաց, 'ի բազում անկարգութիս առաւելեալ. և
անդ բացեալ զանդունդն բերանս իւրեանց՝ բիւր
բամբասանօք չարախօսեն զազգէս և հայհոյութիս
զմր հաւատոյս և զեկեղեցւոյս մերոյ։ Որովք
կրկին դատաստանի պարտական լինին առաջի Այ.
առաջին՝ վս մեղացն զոր խօսին և գործեն. երկ֊
րորդ և մեծ՝ վս գայթակղութե լինելոյ պատճառ։
Նաև եթէ զպարոնացս գայթակղեցուցչին զմի 'ի
փոքրկանց՝ երկանաքար հրամայի կախել և ընկա֊
նել 'ի ծով. զինչ ապա կախելի է զպարոնացս
զայդ մի ողջոյն գայթակղեցուցչին, և յոր խորս


ան֊

անդնդոց արկանելի է։ Այլ որովհետև այժմ 'ի պաշտօնէ Պատրիարգութեան իրաւունս ունիմք 'ի վր̄ բոլոր Ազգիս առ հասարակ երկուց կողմանց ․ և հոգևորական և Թագաւորական իշխանութ̄ք մերովք պարտաւորեալ եմք զօգուտն ընդհանուր Ազգիս կամիլ, և ըստ տկար կարեաց մերոց յառաջացուցանել զբարին ։ Այլ թէ լռեսցուք և անհոգ մնասցուք, երկուք ախտանալ երևիմք ․ կամ երկիղիւ կորուսանելոյ զիշխանութ̄ն Պատրիարգութեան ․ կամ առ երեսս մարդահաճութ̄ք, ո̄չ զի ընկալցուք զփառս 'ի մարդկանէ ․ և կամ զկեղծաւորեալ հաւատս ունելով, որ չէ հեռի յանհաւատութենէ ․ և թէպէտ 'ի մնացս խղճէ միշտ պարտաւոր զանձն իմ դատիմ, բայց շնորհօքն Ա̄յ ազատ կացուցեալ է զիս յայս երից ախտից ․

Այլ զի մի՛ գուցէ այս գործ հովուութեան յանձն եղեալ ինձ 'ի Ճշմարիտ Հովուապետէն, փոխանակ փառացն՝ անարգութ̄ե լինիցի պատճառ ․ ուստի՝ պարտաւոր դատեցայք ապրեցուցանել զմեզ 'ի դատաստանացն Ա̄յ՝ որ 'ի վր̄ պղերգաց հովուացն ․ և առաջի երկնաւո̄ր և երկրաւո̄ր Թ̄գ̄ւ̄ո̄րաց համարձակ երաշխաւոր լիցուք, ասելով՝ ահա ես և մանկունք իմ ․

## ՍԿԻԶԲՆ ․

Գ ։ Ա̄յ 'ի 1816 Թուականի փրկչին, Նոյեմբերի 9, սկիզբն արարեալ խորհեցաք և խօսեցաք ընդ Վերայարդ իշխանս մերոյս կողման որ 'ի Մայրաքաղաքիս ․ և ապա 'ի 23 Նոյեմբերի նախ՝ հրաւիրեցաք 'ի Պատրիարգարանս մեր զերևելիս միւս կողման, որք էին Տիւզեան Գրիգոր Չելէպին ․



Աբի-

Աբիկէն Պօղոս · կրկնեցի մշտուի ամծատուելէն Մատ-
թէոս · տավուտեան Անտոն · և Թնկրեան Յով-
սէփ Աղայքն ։ Նա՛ յորդորեցաք զսոսա լինել պատ-
ճառ բարեաց Ազգիս խաղաղութ(եան), դադարեցու-
ցանել զհամարձակութի խռովչաց · յորոց լինին կագ
և կռիւ, տոյժք և տուգանք, աւերութի և կործա-
նումն Ազգիս ։ զորս ապ Թէ 'ի նոցանէ ուսա-
նիլ կամեցեալ՝ հարցումն արարաք սիրով · Թէ
զինչ է պատճառն այսր բաժանման և փասուց ·
ո՞չ ապաքէն մի և նոյն ազգ եմք, միոյ մր Եկե-
ղեցւոյ ծնունդք · զմի և զնոյն Սբ Հայր՝ հեղի-
նակ ուղղափառ հաւատոյս մերոյ ունիմք զՍբ
Լուսաւորիչն և զՍբ Ներսէս Շնորհալի · և ա-
հա՛ գրենք նոցին Ագաթանգեղոսն, Յաճախապա-
տումն՝ զոր 'ի հայրապետութ(եան) իւրում ինքն Լու-
սաւորիչն գրեաց · և Ընդհանրականն · որովք բա-
ւականն ուսուցին մեզ զհարկաւորսն 'ի փրկութի ·
և չիք մոլորութի 'ի հաւատս մեր, որ յերից ոք
Ժողովոց ընկալեալ ունիմք անխախտ · ընդէր խր-
լատիչք ձեր չանան Թիւրել զազգս մեր 'ի կար-
ծիս իւրեանց · և օտարացուցեալ բաժանեն 'ի
լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ · եթէ Քսի
Աւետարանի քարոզիչք են, զանհաւատս և զկռա-
պաշտս կոչեսցեն 'ի հաւատս · և այլն և այլն ։
Դ · Ապա այս բանից մերոց պատասխանեցին մե-
ղադրեալ միւս կողմն երևելիք, Թէ մեք ևս ըն-
դունիմք զՍբ Լուսաւորիչն և զՍբ Ներսէս
Շնորհալին, և ամ̄ բանք նոցին՝ ուղղափառուի են ։
Առ որս և մեք ասացաք, Թէ այդ իսկ են սքան-
չելիք · զի Թէ մեք՝ և Թէ դուք միաբան ընդու-

նիմք զայս Ս՟ Հարս, ընդէ՞ր վիճիմք, ահա բար-
ձաւ վէճն, յայսուհետեւ մի՛ ծառայէք մտաց
ձերոց, այլ հետեւեցարուք ուղղափառութեան
այսոցիկ Սուրբ Հարց մերոց, քննեսցուք,
թէ նախ քան զբաժանելն ձեր 'ի մէնջ՝ զի՞նչ
դաւանութիւն ունէր Սուրբ Եկեղեցին·
եւ այժմ զի՞նչ դաւանի. եթէ 'ի մէնջ բաժանիլ
ձեր վ՟ն ուղղափառ հաւատոյ է, ահա զՍ՟ Լու-
սաւորչի աւանդեալ Նիկիական հաւատքն ունիմք·
ցուցէք թէ զկնի նոր ինչ մուծեալ եմք 'ի հա-
ւատամքն մեր· ընդէ՞ր թողեալ զազգս եւ զԵկեղե-
ցիս ձեր՝ առանձնական շրջիք· ո՛չ բռնադատեմք
զձեզ յԵկեղեցիս գալ, զի եւ Ք՟ս ո՛չ բռնադա-
տէ զազատ կամս մարդոյ, բայց միայն զայս ա-
սեմք· եթէ ազգաւ հայ էք, եւ զՍ՟ Լուսաւորչի
զհաւատսն ունիք· ահա այն հաւատք են, զոր մին-
չեւ ցայսօր ունի Ս՟ Եկեղեցիս մեր· մեք ո՛չ ու-
նիմք ինչ առնել այլ ազգ քրիստոնէից· եւ ո՛չ նոքա
ընտրինքեան ունելին մեզ առնել. Իսկ դուք հարա-
զատ մեր ազգ եւ սեփհական մեր ժողովուրդք
էք, զի՞նչ է այս տարաձայնութի՟ 'ի մէջ մեր·
Եւ նոքա կրկնեալ զբանս իւրեանց ասացին մեզ՝
թէ դուք ո՟չ ընթեռնուք զբանս Ս՟ Հարցն·
ո՞չ այնպէս հաւատայք: առ այս պատասխանեցաք,
զի՞արդ մարթ է այդմ լինել· զի մեք զբանս Ս՟
Հարց մերոց հարազատ պահեմք, 'ի գիրս տպեալ
հրատարակեմք եւ ընթեռնումք· եւ զոր բերանով
խոստովանիմք, զնոյնն եւ սրտիւ հաւատամք, եւ
այլն· Ուրեմն խոստովանեցէ՞ք զուղղափառութի՟
Հարց Ս՟ Եկեղեցւոյ, եւ 'ի կամս ձեր յանձնեմք

Անհեղեցինս մեր գալ կամ չգալ։
Յայտնի հարցանեմ ձեզ. ընդունիք զուղղափառ ուղի Հայոց Սբ Եկեղեցւոյ, և յինչ իրս կարծիս ունիք, ցուցէք.

Յետ այս ա̃մ բանից, պայմանադրեցաք ի նոյն 17 Նոյեմբերի. զի մեք և նորին գրեսցուք յա̃մ տեղիս, ուրրով և խաղաղութ̃ վարիլ, մինչև աստ այսր մերս հր̃ցման առցուք պա̃տասխանի. Իսկ մեք ը̃ պայմանիս գրեցաք, բայց ի կողմանէ նորին տուեալ և ս խոստովանութ̃ պա̃տուոքն և ազգի ազգի հայհոյլեց զրպարտութիւնք հասանէին յականջս մեր՝ որոց անկարելի եղև լսել մեզ.

ԺՈՂՈՎ․ Է․

Է. Նպա 'ի 23 մայիսի կրկին կոչեցաք զերևելիս նորին, այսինքն՝ Պետրոսին Գրիգոր Չելեպին Տիւզեան. Կարնեցի Մատթէոս Աղային միհտուր Աջատուրեան. Խաչիկզատէ Աստոն, և Թնկըզատէ Յակոբ Աղային.

Որոց ցուցաք զգանկատնաց թուղթն, ընդդէմ քաղաքին խոհեմութ̃ և քրիստոնէկին խղճի զաղէտալի գործն, և յորոց հետևել փոյթ աղքիս և թէ առ ի՞նչ արդեօք ունի վճիռել, և այլն. Ս այս ա̃մ և զայլ վայելչականս՝ աւելի քան զերիս ժամս երկարա̃պս խօսեցաք. մինչ զի վերոգրեալ երևելիքն իրաւունս ետուն մեզ. բայց և խնդրեցին երկթալ խորհիլ, իսկ պատշաճ բանաւոր պատասխանի ինչ ո՛չ ընկալաք.

ԺՈՂՈՎ․ Զ․

Զ. Նպա 'ի յունիսի 15 գոլով մեր 'ի զուրուչեշմէ Պատրիարգարանն՝ զառաջին հրաւիրեալն՝ երրորդ անգամ կոչեցաք զվերոյիշեալ յարգելիսն, ընդ որս երկար խօսեալ ստիպեցաք, զի պատրաս-



տես

տեսցեն զպատշաճ բանս ՚ի խօսել և ՚ի լուծանել վիճոյ կել խնդիր մեր. զոր յանձն առել գնացին ՚ի մէնջ.

## ԺՈՂՈՎ ԺԴ.

ԺԴ. Այս մինչ ՚ի յուլիսի 11 լուր իմն ոչ լուաք, չորրորդ անգամ հրաւիրեալ եղաք ՚ի Պատրիար- գարանն ղուրուչէշմէի զնոյն յարգելեան. և յետ բազում բանից՝ խնդրեցին ՚ի մէնջ համբերել մեզ մինչ ՚ի վաթսուն օր. ապա զի գնացեալ յայն- քան միջոցի իբր բաւականս խորհեսցին ՚ի միջի իւրեանց. և ապա բերցեն մեզ զպատշաճ պատաս- խանի նոյն հարցման մերում, զուղղափառութէ

Հայաստանեայց Սբ Եկեղեցւոյս.

Հաւանեցաք բանից նոցին՝ երկայնամիտ եղաք մինչ ՚ի լրումն կ աւուր պայմանի նոցին. և տեսաք ամե- նեքին անհոգ ՚ի բերել զպատասխանի խնդրոյն մերոյ.

## ԺՈՂՈՎ ԺԵ.

ԺԵ. Ապա յաւուր գրով ՚ի 26 սեպտեմբերի հրա- ւիրեցաք հինգերորդ անգամ. որք թերևս հար- կեալ ՚ի բանից իւրեանց փութացել են ՚ի նոր խանն ՚ի սենեակ մահտեսի Ածատուրեան Յարգելի Մատ- թէոս Աղային, և ըստ ինքեանց ժողովեալ հրա- ւիրեալ են անդ զՊետրապատիւ Վեհաձեռն Աղ- նաւուրեան Կարապետ Ամիրայն. որում խնդիր արկեալ են թէ՝ մնասցէ ժողովս մինչ յառաջիկայ երկուշաբաթին, այն է՝ ՚ի հոկտեմբերի մէկն. Այս յայնմ աւուր ՚ի բուն Պատրիարգարանս մեր ՚ի Սբ Ածածին Մայր Եկեղեցին եկին առ մեզ միայն երկոքին՝ Գերազնիւ Գրիգոր Չելեպին տիւզեն, և յարգի Մատթէոս Աղայն մահտեսի Ածա- տուրեան. և միայն ընկերաց իւրեանց որք անդր ՚ի



շու-

շուկայն խոստացեալ էին առ մեզ գալ. բայց զանց արարեալ զբանս իւրեանց՝ ոչ եկին. վասն և առ մեզ եկեալ երկոքեանն՝ տրտնջելով զժխտող ընկերաց իւրեանց, աղերսեցին մեզ յառաջիկայ ուրբաթի ժողովք հրամայել, յորում և ինքեանք ընկերօք իւրեանց գայցեն, և ՚ի նոյն աւուրն զոր ինչ արժանն է տացուք ասեն միաբան զպատասխանի հարցմանդ.

## ԺՈՂՈՎ. Է.

Թ. Վեցերորդ անգամ ՚ի հոկտ" 8, եկին առ մեզ երեքեանք՝ Գրիգոր Չելեպին Տիւզեան, Մաթէոս Աղայն մահտեսի Ածատուրեան, և Անտոն Աղայն տաւուտէն, և ասեն. միաբան ամենեքեան խնդրեմք ՚ի Հայրութէդ, զի հրամայեսցիք մեզ երկու կողմանց գլխաւոր Անձանց իբր տասն տասն ոգիք ՚ի ներկայութեան ժողովել, խորհեսցուք զորպիսին յառաջանալոյ գործոյս առանց խռովելոյ զհասարակութիւն բոլոր Ազգիս, ՚ի սէր և ՚ի խաղաղութիւն շինելով: զոր և մեք յօժարութեամբ ընկալաք զբանաւոր խնդիրս նոցին, քանզի՝ այն իսկ էր միտք մեր.

Ժ. Այլ մեք արժան դատեցաք զայս ծանուցանել մերայնոց.

Ուստի Նախ՝ հրաւիրեցաք զդասս Քահանայից Մայրաքաղաքիս. որք ՚ի հոկ" 16, յամ եկեղեցեաց եկեալ ՚ի բուն Պատրիարգարանս ՚ի Սբ Աստուածածնի Մայր Եկեղեցիս ժողովեցան և հանդիսացան առաջի մեր՝ ծերունիք գործակալք Աւագերէցք և Թաղականք աւելի քան զհիսուն Քահանայս. Որոց մի ըստ միոջէ զամ եղելութիւնս ՚ի սկզբանէ մինչև ցայսօր՝ և զդիտաւորութիւն մեր



ծա-

ծանուցիք, և հարկեցաք հրովարտակախօս լինել և յայտ նել բոլոր Աշխարհս, որոց լուեալք գիտեմք իբրև զառաջասացն պարզեալ են, և ցանկան վերահասու լինել՝ գիտել զկրկին զճշմարտութին, զի մի՛ գուցէ զայլ և այլ լուրով խառնեսցին.

## Ժ. ՈԴ, ՈՎ, Է.

Թվ. Այս՝ի վաղիւ յենդ աւուր ՝ի 17 հոկտ", միայն զմերային գերպատիւ իշխանս և զերևելիս արուեստաւորաց՝ զորս յառաջագոյն հրաւիրեցեալ էաք, ՝ի զուարու չեշմէ Պատրիարքարանս մեր ժողովեցաք. որոց անունք են այսոքիկ. Սառաֆից Ռեահեայ՝ ազնուաւորէն Կարապետ ամիրայն. Յովհաննէս ամիրայ Արիստագէսեան. Մահտեսի Յովհաննէս Չելեպի. Մահտեսի Յակոբ ամիրայ Լաթիֆեան. Նըքունի Ճարտարպետ Գրիգոր ամիրայ. Գասպար ամիրայ Մահտեսի Գէորգեան. Գրիգոր ամիրայ Տ. Զկիրեան. Մկրտիչ ամիրայ Արփիարեան. Նաղայ Պօղոս Մարգարեան. Ճանիկ աղայ Մահտեսի Սիմոնեան. Սարգիս աղայ Արզումանեան. Մահտեսի Պօղոս աղայ Կէլեկեան. Գրիգոր աղայ Ջերըզեան. Յակոբ աղայ Մանանեան. Մահտեսի Աստուածատուր աղայ Խօնջեկիւլեան. Խաչատուր աղայ Մարտիրոսեան. Յարութիւն աղայ Նորատունկեան. Մկրտիչ աղայ Աշնանեան. Մահտեսի Յարութիւն աղայ Բենկցի. Մահտեսի Մարտիրոս աղայ Ջրկիրեան. Մահտեսի Աստուածատուր աղայ Միւթեվէլլի մայր եկեղեցւոյս. Բարունակ աղայ. Շնորհեան Մանուէլ աղայ. Մանուէլ աղայ Քէրէստէճի. Մինաս աղայ Զարպհանեցի. Յարութիւն Չելեպի Կիւլլապեան. Անդրէաս Չելեպի. Ընդ որս և Մուրախասք արուեստաւորաց



Յայմ

Յայսմ բազմագումար ատենի սկիզբն արարեք
մի ըստ միոջէ ծանուցանել զքաղաքաց քաղաքաց
աղէտս՝ զխռովութիւն՝ զաղաղակս, յորոց առ մեզ
եկեալ զպանդխտանաց թուղթս բացեալ առաջի
ամենայն ընթերցաք, և հարցաք թէ զի՞նչ արժան է
առնել այսր ամի. ո՞չ պարտ է դարման տանել այս
աղէկէզ վիրացս ՚ի բժշկութիւն. իշխանական դաւա_
զանաւ բարկութ՝ պատշաճ է իբր խարանաւ այ_
րել և չորացուցանել զայդքան երկպառակութե
վէրս, թէ սիրով և շահեցողութբ իբր քաղցր սպե_
ղանեաւ պատել և բժշկել:

Այլ որք ՚ի մէջ ազգիս բազումք այլ և այլ կար_
ծեօք շուրջ զայսր դարձուածովք գործոցս մե_
րոց ամբոխեալ՝ զպէս պէս զօտար դատմունս ու_
նէին, ամէն խմացեալ զողջասէր փոյթ և զառ ՚ի
բարին ջանս մեր, ՚ի մի սիրտ և ՚ի մի հոգի եղբայր_
սիրութե վառեալ՝ հաւանութ եռուն ամ բանից
մերոց. և միաբերան խնդրեցին ՚ի մէնջ ոչ թողուլ
՚ի բաց զօգտակար խաղաղասէր զեղանակն, զոր
կալեալ ունիմք. և այնու հնարս հնարել որքան և
մարթ է՝ սիրով և խաղաղութբ ՚ի յամբողջ կատա_
րելութի և յառողջութի հասուցանել զվիրաւոր մար_
մին Ազգիս՝ գթութե ձիթով պատել, և մխիթա_
րական գինեաւ շահեալ ՚ի պանդուխտ եկեղեցւոյ
հանդուցանել, և այլն:

Այլ մեք մինչ տեսաք զխորախնդիր զաւակունս
մեր՝ որդւակից և կարեկից մեզ ըստ ամի, հայր_
կան սիրով և օրհնութբ արձակեցաք զամենին:

## ԺՈՂՈՎ. Թ.

Ժբ. Ապա ըստ կանոնին հրաւիրական գրոց մերոց



կա_

կոչեցաք զերկու կողմանց զԳրեգորի իշխանս և զպատուաւոր անձինս երևելի արուեստաւորաց․ և այս իններորդ ժողով եղև, որք 'ի հոկտեմբ" ժգ եկեալ 'ի ղուրուչեշմէ 'ի Պատրիարգարանն մեր ժողովեցան․ Առաջին Գրեգորի Իշխանք էին վերոգրեալքն․ 'ի Ժա։ Իսկ միւս կողմն Գրեգորի երևելիք են սոքին․ Գրիգոր չէլէպի տիւզեան․ Մատթէոս աղայ մհտսի ածատուրեան․ Յակոբ աղայ Թընկըրեան․ Անտոն աղայ տավուտղարէ․ Յովսէփ աղայ Թընկըրեն․ Նազարէթ աղայ․ Աթանաս աղայ․ Յակոբ չէլէպի․ Մկրտիչ չէլէպի․ Նազըճի Գրիգոր աղայ․ Յովսէփ աղայ փուլճեան․ Զէմպէրէկճի օղլու․ Նա՛ 'ի նոյն մեծահանդէս ատենի՝ ըստ առուչուն Հոգւոյն Սբյ սկսաք խօսիլ 'ի լուր ամենեցուն՝

այսպէս։

## ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ․

Ժդ․ ՀՈԳԻՆ Սբ՝ որ է Աղբիւր սիրոյ և խաղաղութեան, տացէ մեզ խօսիլ զհաճոյս իւր, և ձեզ լսել և 'ի գործ դնել․ որպէս զի՝ բարձցի ատելութիւն և խռովութիւն 'ի պայծառութիւն Ազգիս լուսէ․

Մեծ ուրախութիւն է ինձ այսօր․ զի տեսանեմ ըզ՝ սիրտս ձեր ամցն վառեալ բարինախանձու ուղղափառութեն հաւատոյ․ և սիրով խաղաղութեն․ բայց միանգամայն և տրտմութի մեծ է ինձ այսօր, զի ընդէր բնաւ գտա՛ նենգական որոմն 'ի



մէջ

մէջ ազգիս արմատացեալ. որովհետև հարազատ մի
ազգ և մի արեան եմք. միոյ մօր սբ Եկեղեցւոյ զա-
ւակունք՝ միով կաթամբք Լուսաւորչական Մայր
դաստիարակութեամբք զարգացեալք.

Ողբամ զանձն իմ, զի վասն մեղաց իմոց ուսանեմ
զազգդ իմ բաժանեալս 'ի միմեանց, և թշնամութեան
աչօք հայեցօղս առ միմեանս.

Խնդամ, զի թերևս բարձցի 'ի միջոյ վէմն գայ-
թակղութեան, և հաստատեսցի գլուխ անկեան բա-
ժանեալ որմոցս միացուցիչ սբ Լուսաւորիչ
Հայրն մեր.

Ժդ. Ո՛ ինչ արդեօք կարծէք զարամեանս Ազգ
և զսբ Եկեղեցի Հայոց. մի թէ փոքր և արհամարհ
գտաւ 'ի մէջ աշխարհի, ոչ երբէք. քանզի առ
Ազգս մեր և առ սբ Եկեղեցիս Հայոց ինամք և
փառքն Այ՝ 'ի վեր է քան զբազում ազգս, մինչև
գոչել մեզ զՄարգարէականն՝ մեծ արար Տէր զառ-
նել ընդ մեզ: Սաղմոս. ճիե. 3. մինչ մեք էաք 'ի
խռովութեան քաղան, և 'ի ստուերս մահու կռա-
պաշտութեան նստեալ, ծագեաց առ մեզ զլոյս արդա-
րութեան և ողորմութեան. Քանզի Յարոյց Այ զառա-
ջին Քահանայապետն մեր՝ զսբ Գրիգոր Լուսաւո-
րիչն, և 'ի ձեռն նորին կանգնեցաւ Խորան վը-
կայութեան Տաճար փառացն Այ, այս է՝ Մայր
Աթոռն մեր Կաթողիկէն սբ Էջմիածնի 'ի դաշտին
Արարատեան, յոր Միածին Որդին Այ իջել
ոսկեուռամբ հզօր ձեռին՝ ձևացոյց լուսով 'ի
պարծանս Ազգիս, և անխախտ պահեալ է մինչև
ցայսօր՝ և պահէ մինչ 'ի կատարած աշխարհի: առ
որ յարմարի և միւս բան Մարգարէին՝ ոչ այնպէս

3/309-64

Ապա զի՞նչ պակաս ունիս քան զայլ քրիստոնեայս.
մի՞ թէ լեզու ոչ ունիս սեփհական հնչմամբ
հաստատեալ. գի՞ր ոչ ունիս Աստուածահրաշ տես_
եամբ պարգեւեալ. գի՞րք ոչ ունիս Աստուածաշունչ կ_
տակարանօք եւ պէսպէս գիտութբք պերճացեալ.
Աթոռ ոչ ունիս հոգեւոր իշխանութբք հաստա_
տեալ. Աթոռս եւ Պատրիարգ ոչ ունիս եկեղեցական
ուխտիւք զարդարեալ. զիա՞րդ թողեալ զսեփհա_
կան Հովիւս եւ զվարդապետս քո՝ որք Աւետարանաւն
ծնեալ են զքեզ, գնացեալ իբր անազգի՝ յարկս
յօտար հարս, զի՞նչ էր ամայի լքեալ զհացալից սե_
ղանս հօր քո, իբր սովալլուկ դեգերիս առ
դրունս այլոց, եւ այլն.

ԺԵ. Արդ այսր հաշեալ մաշեալ են սիրտք հարցն
մերոց՝ որ նախքան զմեզ, եւ զմեծամեծ տառա_
պանս կրեալ են վասն մեր Եկեղեցւոյ պայծառութեան, եւ
Ազգիս խաղաղութեան. նոյն վտանգ կայ եւ մեր առաջիս
Ապա քաղցր է ինձ զմահ ճաշակել, քան զազգս
իմ յայսպիսի դառն աղէտ տեսանել. եւ ո՞չ կա_
րացից համբերել. նա՝ պարտաւորութիւն է ինձ զայս
սովիկ ազդելս, զոր եթէ լռեմ, վա՜յ է ինձ. եւ ե_
թէ խօսիմ, ոչ ինչ առաւելութի. որում յածային
կոչմանէ հովուէ կարգեցայ. հանապազ հնչէ յա_
կանջս իմ ահագնալուր ձայնն Աստուածային թէ՝ Որդի
մարդոյ՝ դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, եւ այլն
Եզեկ. լգ. իսկ եթէ վասն այսր զմարմնական վնաս
ինչ կրեցից յազգէն, եւ այն իսկ ուրախութիւն է ինձ.
ըստ որում զերծեալ ի պարտաւորութենէս, ազա_
տանիմ ի յաւիտենական դատապարտութենէն, ո՛չ



ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека ՀՍՍՀ Арм. ССР

և ասէ Տէր նոյն Մարգարէիւն և զմիւս բանն
առ այսոքիկ. Նոյա թէ դու յառաջագոյն պատ_
մեցցես, և նոքա ոչ լուիցեն, դու զանձն քո
ապրեցուսցես, և արեան նորեանց ինքեանք ե_
ղիցին պարտականք:

Նաև այս միւս ևս յայտնի օրինակ իմն. Մինչ
հովուի ոչխարք յերկուս ձև գզեալ մինչ զմիմեանս
կոտորեն, զինչ պարտէ հովուին առնել. որդեօք
փախչիլ և 'ի բացուստ դիտել, եթէ 'ի մէջ հօտին
մտեալ 'ի խաղաղութի համոզել. Նոյն օրինակ է
այժմ և իմ առջի. ոչխարք իմ են յոյժ խռովել
և աղմկեալ. թէ և չանսալով խրատուց իմոց առ
ատն կոչեսցեն զիս, սակայն և այն փառք է ինձ՝
յայսպիսի ձգտումս մտանիլ. զի ոչ առ հանդիստ
մարմնոյ հրաւիրեցայ յայս իշխանութի Պատրիար_
գական. և 'ի վր Ազգիս իմոյ 'ի վիշտս և 'ի տառա_
պանս սրբեալ եմ զանձն իմ. և չիք առ այժմ քան
զայս հարկաւոր. զի այս ախտ օր ըստ օրէ զօրա_
ցեալ ճարակի յազգի մերում, մինչև անյոյս մնալ
և 'ի ճարտարութենէ բժշկաց:

Նոյ չիք քան զայս դարձեալ դժուարին. զի կա_
րի քաջ արմատացեալ է, և յամ տեղիս սոսս ար_
ձակեալ. և որ առաւել զարմանալի և անհերքելի
մեքենայ չարին է. զի զայս վէճ և զայս երկպա_
ռակութի հաստատել՝ իւրաքանչիւր ոք համարի
Այ հաճոյական պաշտօն
ընծայել:

Ժզ. Նոյ այս յիրաւի՝ կարի՝ քաջ պարտական է իւ_
րաքանչիւր քրիստոնեայ մինչև 'ի մահ մարտնչել
պահել զուղղափառ հաւատն. քանզի հաւատքն է



գլուխ

գլուխ հոգւոյն, և ուղղափառութիւն է կենդանութիւն
նորին. և ոչ անդամք մարմնոյ 'ի գլխոյն առնուն
զկենդանութիւն. և 'ի վհատանալ և 'ի բառնիլ գլխոյն՝
վհատեցեալ և բարձեալ լինի և կենդանութիւն մարմ-
նոյն. ուստի և անդամք մարմնոյն՝ պարտաւորին
պահպանել զգլուխն՝ և օգնել առողջութեան նորին.
Այսպէս և իւրաքանչիւր մարդ. ամենայն կարեօք գոյ-
իւք և ստացուածովք պարտական է. և ամենայն մա-
սամբք հոգւոյ և մարմնոյ պահպանել զգլուխ հո-
գւոյն՝ զհաւատս Քրիստոնէական, և զկենդանութի
նորին զուղղափառութիւն. և թէ հնար է՝ զմարմինն
եւս փոխանակել, զի հոգին կեցցէ. ըստ որում
հոգի առաւել է քան զմարմին.

Բայց սակայն առ այժմ յայսմիկ ոչ է այնպէս
զոր կարծէքն. նա՛ աւանիկ եկ՝ երկոքումբք աչօք
քննեա՛ և տե՛ս, զի Հայաստանեայցս մեր Եկեղեցի ա-
ռողջ ունի զգլուխ հոգւոյն՝ զուղղափառութիւն
Հաւատոյն, որ 'ի մեր Լուսաւորչէն է ընկալեալ
և 'ի սահմանի նախկին Երից մեր ժողովոցն հաս-
տատեալ կայ. և ոչ իւիք պակասեալ 'ի հարկաւորացն
առ կենդանութիւն հոգւոյ. ապա թողեալ ձեր զճշմար-
տութիւն, և ոչ գիտելով զձեր ուղղափառութիւն՝ զճ-
շմարտութիւն և զուղղափառութիւն խնդրէք. 'ի խնդիր
Աստուածսիրութեան ելեալ՝ յԱստուածատեցութիւն ժամանէք.

Ժէ. Ապաքէն թողեալ զայս ամենայն՝ զորս ոչ միայն
այժմ, այլև 'ի սկզբանէ վերատեսչութեանս մինչև
ցայժմ բազմիցս խօսեալ եմք. և այժմ վերստին
զնոյն հարցանեմք և ոչ դադարեմք 'ի խնդրելոյ
զայս. զի՞նչ կարծիք ունի՞ք զուղղափառութենէ
Հայաստանեայց մեր Եկեղեցւոյս. բաց յայսմանէ առ


այժմ

այժմ չունիմք զայլ ինչ ասել ձեզ, և խնդրել 'ի ձէնջ. և յորժամ այս հարցմանս տայք զպատասխանին, յայնժամ ըստ կարգի յառաջացի բանս մինչ 'ի նպատակ խաղաղութեն Ազգիս. առ որ պարտական եմք հոգւով և մարմնով ձգնիլ՝ մինչև 'ի ձեռս բերցուք, զոր միայն խնդրէ Ած յամենայն անձնէ, ըստ այնմ՝ չէք հնար ընդ Այ առնել զխաղաղութի, մինչև առ եղբարս զնոյն ուղղել իցեմք. Արդ որովհետև ցանկայք 'ի միասին գալ ընդ գլխաւորս մեր՝ և այնպէս զպատասխանին տալ. ահա այս է այն ատեանն, այս է ժամանակն. յայսմ հանդիսի հրամայեցէք, ամենեցուն յայտնի ծանուցէք զմիտս ձեր, զոր ինչ համարումն ունիք վասն որ եկեղեցւոյս Հայոց. յայս վերջացուցեալ զբանս
մեր՝ լռեցաք.

ԺԸ. Յայնժամ միւս կողմն երևելիքն ոչ ետուն զուղղակի պատասխան հարցմանս մերում. և յայլ կերպ դարձուցին զբանս իւրեանց ասելով, թէ մեք ևս ընդունիմք զսուրբ Գրիգոր Լուսաւորիչն, և զսուրբ Ներսէս Շնորհալին մեզ Հայր և Հովիւ հոգևոր, և նոցին ուղղափառութեն հետևիմք. Մերայինք ևս ասացին, թէ մեք ևս զայնոսիկ առաջադրեմք ձեզ. և որովհետև մեք և դուք զնոյն երանելեաց բանս միանգամայն ընդունիմք. ապա այս տարաձայնութիս որպ մտեալ է 'ի մէջ մեր, և զմեզ մասն մասն փերեկեալ. եթէ երկու կողմունքս զմի և զնոյն սուրբ Հարս ունիմք, և ուղղափառութի մեր 'ի բանից նոցին ցուցանին, ուստի արդեօք այս բաժանմունք մեր 'ի միմեանց. յայտ է թէ՝ հակառակասէր անձանց արդիւնք են, որք



այլ

այլ ընդ այլոյ կամակոր մեկնելով զբանս մեր հարցն
մերոց՝ անջատեալ են զազգս, և օտարացուցեալ
զատեալ են 'ի հարազատութենէ մեր Եկեղեցւոյս մերոյ.
մի՛ ևս լուիցուք հակառակասէր բաժանողացն զմեզ.

ՃԺԹ. Ապա համախմբեալ ժողովն՝ ըստ Աստուածաշնորհ
ազդեցութեան քաղցր սիրով սփրահարեալք ընդ մի-
մեանս, 'ի մի սիրտ և 'ի մի հոգի վառեալ միաբան
աղաղակեսցին, թէ ամենեքեան ճանաչեմք, և Աստուա-
ծային Սիրով ընդունիմք ընդ հանուր Ազգիս հայոց
զԱռաջին Քահանայապետն մեր՝ Հովիւն հոգևոր
և Աստուածարեալ Առաջնորդ՝ զՍուրբ Գրիգոր Լուսա-
ւորիչն իւրովք սրբովք շառաւիղօք, և զՍուրբ Ներսէս
Շնորհալի Հայրապետն մեր. սոցին աւանդեալ դա-
ւանութիւն հաւատոյ՝ ընդունելի է մեզ, ամենեքեան
այնպէս հաւատամք, զնոցին Աստուածպաշտութիւն ուղ-
ղափառութիւն գիտեմք. առաջի բերցուք զգիրս նո-
ցին. նաև զեկեղեցական գրեանս զայսոսիկ. ժա-
մագիրքն. շարականն. խորհրդատետրն. ճաշոցն և
մաշտոցն. որք հանապազօր պաշտին յամենայն Եկեղեցիս
մեր, որովք մատուցանեմք զաղօթս մեր, և հռչա-
կեալ քարոզեն հաւատք հայաստանեայց մեր եկե-
ղեցւոյ. վասն Հայրապետաց մերոց բանս՝ անաչառ
ճշմարտութեան վճիռ տուցուք, և առանց մեկնութեան
առանց հակառակութեան երկուց կողմանցս ըն-
դունելի են.

Ի մէջ բերցուք զճշմարտասէր և զգիտնական անձինս,
զի անաչառ սիրով յայտնել ծանուսցի ուղղափա-
ռութիւն մեր եկեղեցւոյս համաձայնութեամբ վերոյիշեալ
մեր գրոց. առ որս ամենեքեան համաձայնեալ հը-
նազանդ եմք պատգամաց սոցին. ուղղափառ վար-



դա-

դաւանութեան սոցին հետեւիմք. ոչ տատանելովք եւ ոչ պակասեցուցանելովք, միշտ զնոյն խնդրելովք եւ եթէ յետուստ նոր մուծեալ ինչ գտցի օտար 'ի վարդապետութե(ան) սրբոց հարց մերոց, յամենեցունցս անընդունակ եղիցին, եւ այս' 'ի բանս հաւատոյ. նաեւ զհանգամանսն ամենեւին ոչ այլայլել. եւ 'ի նոյնութեան պահել միշտ պարտ է, միայն բարձցուք զկնճիռն ատելութեան միմեանց, բացէ 'ի բաց հեր- քեալ հալածեսցուք զոխերիմն սոյնի' զերկպառա- կութիւն, եւ այլն եւ այլն.

Մեք չունիմք բան ինչ եւ հակառակութի(ւն) ընդ այլ Եկեղեցիս զորոց մեզ չէ փոյթ. մեք զմեր հայկա- զեան սրբոց հարց զուղղափառութիւն կամիմք յայտնել ի. Այն որ գրեալն է' յայնմ հանդիսի գոլով Վարդապետարանի դասատու մեծիմաստ Տիրացու Թադէոս Վարժապետն, լուեալ զայս միաբան Ս' Ծաղկեցիկ հաւանութի(ւն) ժողովոյս, ոչ կարաց լռել 'ի տեսարանին, 'ի լուր ամենեցուն խօսեցաւ զայս բանս. որովհետեւ ամենեքեան հաւանեալ ընդունիք զբանս սրբ(ոյ) Լուսաւորչին, եւ սրբոյն Ներ- սեսի Շնորհալւոյն, եւ այլն. ուրեմն չմնաց այլ ինչ բաժանումն 'ի միջի, այժմ ստորագրեալ կըն- քեցէք զայսոսիկ ընդունելն ձեր. եւ այլն.

Իսկ ժողովն միաբան պատասխանեցին այսմ, թէ իւրաքանչիւրոցս վկայութի(ւն) 'ի մէջ մեծի ժողո- վոյս' առաւել քան զկնիք հաստատուն է. զի ամ(ենայն) բանք սրբ(ոյ) Լուսաւորչին եւ սրբոյ Ներսեսի Շնոր- հալւոյն' մեզ ամենեցունցս ընդունելի են ա- ռաջի այ եւ մարդկան.

ի. Ու մեք զայս ամ(ենայն) 'ի լսելն' սկսաք կարդա-



ռու

առնուլ զվկայութիւն իւրաքանչիւրոց՝ յանուանէ կո-
չեցալ մի առ մի թէ՝ հաւատամս և ընդունիմս զուղ-
ղափառ հաւատս մեր Լուսաւորչին և մեր Ներ-
սէս Շնորհալւոյն, և հնազանդեալ հետևիմս ամ
բանից սոցին, և այլն։

Եւ այսպէս յատուկ յատուկ ՚ի սոյն յայս ՚ի հոկ-
տեմբերի 23 ժողովս եղեալ իւրաքանչիւրոց (որք
նշանակեալ են ՚ի վերոյ ՚ի ԺԱ. և ՚ի ԺԲ.) յանուա-
նէ հարցաք. մինչ զի երկուց ոմանց զանուանս
ոչ գիտելով՝ ստուգեալ յանուանէ կոչեցաք. և
ամեցուն երկիցս կրկնեցաք զայս հարցմունս մեր.
և յամեցունց յօժարակամ սրտիւ հաճութիւն և ընդու-
նելութիւն ընկալաք. ըստորոյ ուխտ և դաշինս հաս-
տատեցին միաբան ժողովն, թէ միւսանգամ ան-
պատճառ գումարեալ նստցին ՚ի յայտնութիւն Լու-
սաւորչական հաւատոյ, և աւելի ինչ քան զպայ-
ման այսմ ժողովոյս՝ ոչ առնել և ոչ ընդունել։
Եւ առ այս իբր քսան օր միջոց խնդրեցին. ոպ
զի՝ երկաքանչիւր կողմունք զարժանաւոր անձինս
որոշեալ ՚ի պայմանեալ օրն անպատճառ ՚ի միասին
գայցեն՝ միայն Գերյարգելի Իշխանք և գիտնական
Անձինք, և ըստ այսց գրոց բանից արասցեն զար-
ժանն. այսպէս սրտիւ վճարեալ այս ժողովս ար-
ձակեցաւ ՚ի խաղաղութիւն։

ԺԳ. Յետոյ մեք ՚ի Պատրիարգարանս Մայր եկե-
ղեցւոյս եկեալ՝ հրաւիրեալ գումարեցաք՝ որ ՚ի
Մայրաքաղաքիս էին՝ Արք Եպիսկոպոսունք,
Վարդապետք, Քահանայք, և երևելի գիտունք՝ առ
առ մեօք գտեալք, և միաբան խորհրդով որոշե-
ցաք զպատշաճ գիտունս, որոց կարգ և սահման



եդաք

եդաք ըստ պայմանի ժողովոյն , և կանոնական
Կոնդակ գրեցուցեալ կնքեցաք · զի 'ի լինել քըն_
նութե̃ գրոյ , ըստ այնմ պայմանի խօսեալ կատա_
րեսցեն զամենայն ինչ .

# ՕՐԻՆԱԿ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ .

Իգ . ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱ_
ռայ Տ̃ր Պօղոս Արք Եպս և Շ_
նորհիւ Այ̃ Հոգևոյն Վ. երտուէչ
և ՊԱՏՐԻԱՐՔ Մեծի Մայ_
րաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ , Յորմէ սիրով և Աստուա_
ծային օրհնութ̃բ ծանեարուք Սիրելիք մեր 'ի տ̃ր · զի
Հովուապետութե̃ պաշտօնիս պարտաւորութի̃ ստի_
պէ հոգ տանիլ պայծառ հաստատութե̃ Հայաստա_
նեայց ս̃ր Եկեղեցւոյ , սիրովն Քս̃ի 'ի խաղաղու_
թեան պահելով .

Եւ քանզի յռ̃ջ քան զաւուրս մեր 'ի ժամանակս նախ_
կին Սրբզն ՊԱՏՐԻԱՐՔաց , եւս և յաւուրս ՊԱՏ
ՐԻԱՐՔութե̃ մերում , 'ի բազում քաղաքաց հասա_
նէին յականջս մեր և բոլոր Ազգիս Հայոց բո_
ղոքք և աղաղակք անլռելիք · իբր զի համազգային
հարազատք' միոյ ս̃ր Աւազանի ծնունդք , և միոյ
Հօր ս̃ր Լուսաւորչի ժողովուրդք ոմանք' այլ
ընդ այլոյ ուսմամբք համարին զեկղ̃ցիս Հայաս_
տանեայց հեռացեալ 'ի Լուսաւորչական հաւա_
տոյ յուղղափառութե̃ · ուստի և 'ի դատապարտութի̃
անձանց 'ի չարիս իրերաց յառաջացեալ գտանին
անհնարին հակառակութ̃ք , անհաշտ խռովութ̃ք , ազգէ

ազգէն ձնազք և տուգանք. (և թէ մարթ է ասել)
Մանաւանդ ընդդէմ հայհոյութեանց, տանց և եկեղեցեաց ա-
նէրութիւք, մինչև անողորմ մահ Եղբայր եղբօր
պատճառեցին. վայ և մեք ամենախնամ Հայրութ-
մերով՝ ի ջատագովութ ուղղափառութ Լուսա-
ւորչակրօն հաւատոյս մերոյ, և առ ՚ի բժշկել և
բառնալ զայս ազգակորոյս ժանտախտս, խորհե-
ցաք և խօսեցաք ընդ երևելի մեծարու անձինս
՚ի Մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի, սիրով հար-
ցումն արարաք, թէ առ ի՞նչ պատճառ այս ամ չարիք
լինին, զի՞նչ երկբայութ կամ կարծիք զԼուսա-
ւորչաւանդ հաւատոյս մերոյ ունին՝ զոր մինչև
ցայսօր անխախտ պահեալ է և պահէ ազգ Եկեղեցիս
Հայոց. և զայս բան իբր միոյ տարւոյ միջոցաւ
հարցեալ՝ զբանաւոր պատասխան ինչ ոչ ընկալաք.
Ապա ՚ի զուրուչէշմէ Պատրիարքարանի մերում
՚ի հոկտեմբերի 23. ժողովեալ զառ հասարակ
Գերյարգի Իշխանս և զերևելի անձինս երկուց
կողմանց. և ՚ի նոյն հանդիսի վերստին առաջարկե-
ցաք զնոյն հարցումն մեր. Իսկ միւս կողմն յար-
գի երևելիքն յայլ ժամ դարձուցեալ զբանն, խնդ-
րեցին ՚ի մէնջ զնոր ժամ խնդիր այսպիսի. թէ
յերկուց կողմանց խաղաղասէր խոհեմագոյն գի-
տունք ՚ի միասին նստեալ ՚ի ներկայութ Գերյար-
գի Իշխանաց՝ առաջի արասցեն զսբ Լուսաւորչի
ուսուցեալ զուղղափառ հաւատս Հայաստանեայց
սբ Եկեղեցւոյ. և առ այս ամ ժողովք հաճեալ՝ միա-
բերան խոստովանեցան, թէ զսբ Լուսաւորչին
մերոյ ուսուցեալ զհաւատս խնդրեմք. զոր ինչ
սբ Լուսաւորիչ և սբ Ներսէս Շնորհալի Հայ-

րապետք մեր գրեալ են, ամենեցուն ընդունելի
են, ամբերանքս այնպէս համառօտմբ. 'ի մէջ Լուսաւորչէ
բնաւին ոչ շեղեմք, զի սոցին միջնորդութեամբ ըն-
կալաք զուղիղ հաւատս.

ԺԴ. Ուստի և մեք սիրով ընդունեցաք զայս խնդ-
դիր բոլոր ժողովոյս. վասն որոյ և յատկացուցաք առ
այս գործ զայսոսիկ անձինս.

Սրբոյ Էջմիածնի ծայրագոյն 'Լուսաւորեալ' ծերունազարդ
Մարկոս Արքեպիսկոպոսն, Մերս Միրելի որդի Կա-
րապետ Նորապսակ Արքեպիսկոպոսն. Հանճարեղ Պետ-
րոս Վարդապետն. յորդի Աթոռակալ Տէր Մելքոնն
Գալատու. Սբ Աստուածածին Մայր Եկեղեցւոյ դիտնա-
կան Տէր Մեսրովբն. պատուելի Աթոռակալ Տէր
Բարդուղիմէոսն իւսկիւտարու. իմաստապերճ
Տիրացու Թադէոս Վարժապետն Գործդրանի. և Նօտարք
Ղալաթիոյ տէր Օքբէն և Գործդրանի ատենադպիր
Տիրացու Գրիգորն. Որք լինիցին միայն բացայայտիչք
Լուսաւորչին Հաւատոյ Հաստատնեայց մեր Եկեղեցւոյս
ընդունելի գրովք. և ոչ ունիցին իշխանութիւն
բնաւին զանօրէնութիւն և զանտեսութիւն իմն առնելոյ.
Որոց Պատրիարքական իշխանութեամբ մերովք հրա-
ման տուաք, զի յայտնեսցեն զմեր Լուսաւորչին
մերոյ աւանդեալ զՔրիստոնէական հաւատս ըզ
հարկաւորս փրկութեան հոգւոց, զոր անկորուստ և
անխախտելի պահեալ ունի մեր Եկեղեցիս Հայոց
մինչև ցայսօր. սակայն ոչ 'ի մէջ այն ժողովոյն
պայման եդաք, այնպէս պատուիրեմք դիտել թէ
յինչ կերպ պարտ է խօսել, և որ գրովք ունիք
յայտնել.

ԺԵ. Կերպ և եղանակ խօսելոյ՝ նախապէս հարկի-



և

և հարկիւ պատուիրեմք համայն ժողովելոց՝ Ա.Գ
նիւ սիրելեաց մերոց՝ Պերյարդի Ամիրայից, և
գիտնական Անճանց՝ մեծաւ խոհեմութեամբ զգու-
շութիւն ունել ըստ Առաքելական խրատուն, մի՛ բա-
նակռիւ լինել, մի՛ խռովեցուցանել զմիմեանս.
այլ առանց երկբայութեան անաչառ ճշմարտութեամբ՝
քաղցր և Աճայեն սիրով խօսել, և յայտնել ըզ-
ճշմարտութիւն ուղղափառութեան մերս սբ Եկեղեցւոյ.
զի և անուանն Ա.Ծ փառաւորութեան և ազգիս շի-
նութեան լինիցին պատճառ, ըստ պայմանին սահմա-
նելոյ 'ի ժողովին. և չունիմք բնաւին հրաման
անցանել անդր քան զայս սահման.

ԻԴ. Գիրք բացայայտիչք ուղղափառ հաւատոյ
Հայոց սբ Եկեղեցւոյս՝ բաց 'ի յԱծաշունչ գրոց,
են յատկապէս այնք, որք Սբզն Հայրպտց մերոց
սահմանադրութեամբ հանապազօր պաշտին յամ սբ
Եկեղեցիս Հայոց. որովք խոստովանիմք զուղ-
ղափառ հաւատս մեր Առաքելական և Սորգա-
րեական բանիւք հաստատեալ.

Այն են այսոքիկ. Ժամագիրքն, Շարականն. Խոր-
հրդատետրն, Ճաշոց և Մաշտոցն. ընդ որս և գիրք
սբ Լուսաւորչին և ընդհանրականն սբյն Ներսիսի
Շնորհալւոյ. յայսոսիկ գրեանս Լուսաւոր մտօք
հաւաքեալ գանձին բանք ուղղափառ սբ վար-
դապետաց Եկեղեցւոյ մերոյ՝ հարկաւորքն 'ի
փրկութիւն հոգւոց. և բաց 'ի սոցանէ չունիմք հրա-
ման զայլ գիրս բերել. քանզի սոքա են հիմունք
ուղղափառութեան Հայաստանեայց սբ եկեղեցւոյ.

ԻԵ. Այս գրոց բանք ընդունելի են ըստ մտաց
հեղինակին՝ դիւրիմաց մտօք՝ նոյն բառիւք, ոչ
աւելի և ոչ պակաս.

Պիւրիմաց մասօքն այն է, զոր բանն ըստ ինքեան
առաջին իմացմամբն ցուցանէ. կամ որ բազում
մեր Հարք իմացեալ յաջ բերցեն 'ի գիրս իւրեանց,
հարկ է և մեզ այնպէս ձանաչել զատոյգն. ուստի
զմթին և զգերազանց բանս նոցին՝ պարտաւորիմք
ստուգել վկայութբ մեր Հարցն մերոց. որք վս
այնր պարզապէս գրեցին. և մի այժմ նորոգ մեկ-
նութի տալով բանաբարել.

Նոյն բառիւք. այսինքն մի և մի լեզի գիտնական
ոձիւ անելի բառ ինչ իբր 'ի յայտնութի մուծա-
նել. այլ նոցին բարբառով զնոցայն խօսիմք.

Այս է ժողովոյն պայմանն, և այսքան է մեր այժմ
սա հրամանն. Աղջ լերուք. և Հոգին ձշմարտութե
առաջնորդեսցէ ձեզ ամ ձշմարտութբ.

'ի 1817. Նոյեմբ" 22. 'ի Պորտուգալուս ամ Հայոց.
Իր. Նա պա 'ի կատարել պայմանադրեալ քսան ա-
ւուրց՝ զոր նոքա խնդրեցին, ըստ սեփհական սո-
վորութե իւրեանց յանհօգս կային. ոչ ինչ բան և
լուր պատրաստութե իւրեանց ծանուցանէին մեզ,
զոր ինքեանք 'ի ժողովն խոստացան ազդ առնել
առ մեզ. իսկ մեք 'ի նշան սիրոյ և 'ի պատիւ յար-
գութե նոցին՝ Գերապատիւ Քեահեայ Ամիրային
ազդ արարաք նց, թէ ահա լրացեալ անցին պայ-
մանեալ աւուրքն. հրամայեցէք 'ի կատարումն
գործոց, զոր 'ի մեծահանդէս ժողովին դաշնա-
դրեալ ուխտիւ յանձն առիք. բայց նոքա վերըս-
տին խնդրեցին 'ի մէնջ, եթէ հնար է գրով
յայտնեսցուք զմիտս մեր, և այլն.

Նաև մեք ըստ խորհրդոյ գիտնական հարազատաց
մերոց՝ ծանուցաք նոցին, թէ ոչ իսկ հաձիմք



գրել

գրել ինչ, ո՛չ զնոր իմն վիճաբանութեան, և ո՛չ զնո_
րոգ յայտարարութեան հաւատոյ.

Ո՛չ կամիմք զվիճաբանութիւն. զի ահա՛ անթիւ վիճա_
բանութիւնս գիրք մինչև ցայժմ ո՛չինչ օգտեցին
բառնալ զերկպառակութիւն ազգիս. և ո՛չ ևս օգ_
տեն նորոգ գրեալքն 'ի մէնջ կամ 'ի ձէնջ.

Ո՛չ կարօտիմք գրել և զնոր իմն յայտարարութեան հա_
ւատոյ. զի ուղղափառութիւն Հայոց բացայայտ երևի
հաստատեալ 'ի բանս սրբոյ Լուսաւորչին և սրբոյն
Ներսիսի Շնորհալի Հայրապետին. և յամենայն եկեղե_
ցական գրեանս մեր. որք հերքեալ զամենայն չարափա_
ռութիւնս, առաջի առնեն զուղղափառութիւն զճշմար_
տութեան հաւատոյ Հայաստանեայց սրբոյ Եկեղեցւոյ.
և զայսոսիկ գիրս անայլայլելի ունիմք և պահեմք.
Ապա մեք զայլ ինչ բնաւ ո՛չ գրեմք և ամենևին
ո՛չ ընդունիմք զնորոգ գրեալ դաւանութիւն կամ
զյայտարարութիւն հաւատոյ՝ յորդեացս յումեքէ՛ և
իցէ. այն զի՝ իւրաքանչիւրոց առանձին կարծիք
ո՛չ զօրէ դատել զհակառակութիւնս հաւատոյ. և զի՝
նախնի սուրբ Հարքն քան զմեզ յոյժ գերազանցեալ
էին գիտութեամբ, վարուց սրբութեամբ. և յամենայն ազգաց պատ_
ուեալք ուղղափառութեամբ. եթէ նոցին բանք ո՛չ
զօրեն, զիա՞րդ մերս զօրեսցէ. մանաւանդ զի՝ այս
իսկ է պատուհասեալ խոտորումն 'ի բանից սրբոց
Հարց. իւրաքանչիւրոք առ միալեզու համազգա_
յինս զնոր իմն դաւանութիւն կամ զյայտնութիւն հաւա_
տոյ գրել. զի եթէ ըստ բանից սրբոց Հարց, զի՞նչ
պէտք են կրկին գրութեան. յայտ է թէ յայլ միտս
խնդրեն, որով և խոտորումն 'ի սրբոց Հարց, կամ
խոստովանիլ թէ՝ սուրբ Հարքն մեր ո՛չ եղեն բաւա



կանք

կան արդեօք 'ի յայտնաբանել, կամ որք ոչ կարենն՝ անհաւատ դատել, և այլն և այլն։ զորս քաւ լիցի մեզ խորհել անգամ, թող թէ ստիպել զմիտս սուրբ Աւազանի հարազատ եղբարս։ Ուրեմն բացայայտ ուղղափառութիւն համարիմք ուղղակի ընդունելութիւն զհամաձայնութիւն մեր 'ի բանս սրբոց Հարց մերոց. և ահա նշան և ապացոյց՝ անփոփոխ և անկորուստ պահելոյն զհաւատս մեր այս է. զի ահաւասիկ ըզ Նիկիական հանգանակն սուրբ Լուսաւորչին մերոյ ստորագրութեամբ՝ իսկ մեք փառաւորեսցուքին յամենայն սուրբ Պատարագս մեր՝ բարձր ձայնիւ 'ի լուր ամենեցուն միաբան երգեմք, կնիք Առաքելական դաւանութեան Լուսաւորչաւանդ ուղղափառ Հաւատոյս մերոյ. Բայց սիրելիքդ մեր ըստ խոստման ձերում փութացէք որ յառաջ գալ անպատճառ. և դէմ յանդիման ցուցեալ զբանս սրբոց Հարց, վճարեսցուք զարժանն, և ամենքն հնազանդեսցուք սուրբ Լուսաւորչին, և այլն։ զայսպիսի պատասխանիս մեր Գերապատուի Բահեայ Ամիրայիդ ծանուցաք նմա։ իթ. Այս 'ի նոյեմբ. 14 յատուկ հրաւիրանաց գիր գրեալ իւրաքանչիւր իշխանաց մերոց, և մի ևս հասարակաբար միւս կողմն երևելեաց, զորս առաքեցաք առ Գերապատուի Բեահեայ Ամիրային յղել առ իւրաքանչիւրոցն, զի ըստ յատկացեալ աւուրն ժողովեսցին 'ի միասին 'ի պատրաստեալ տեղին։ Եւ զինչ առ այժմ ծանուցաք առ հասարակ օրհնեալ Ազգիդ մերոյ. քանզի այսքան Սիրով և քաղցր հրաւիրանօք բազմիցս ժողովել. թէ առ մեզ և թէ առ ինքեանս խորհեցան և խօսեցան բազմալեզու բանիւ, ոչ զայլ ինչ պտուղ



ցու_

ցուցին, բայց միայն թէ լցին զբանս մեր Լու-
սաւորչին մերոյ, զոր մարգարէական հոգւովն կա-
նուխ գրեալ է զվերջպետցուցչացն 'ի Վարդապետ,
տուէ խուրմէ զայսոսիկ․

Որք յոյոյ հաւատոյ վերպեցան՝ զանկոխ և զան-
խուլ գնացին, և զարտուղի անկին, և խրամատեցին
անձանց իւրեանց ցանկս անկարկատս, և զբապուռ
'ի հաւատոցն թիւրեցին, իբրև կարծէին թէ
գտին ինչ, գտին զոչ ինչն․ որպէս և գրեալ է թէ՝
հոգան զհետ ոչնչի, և գտին զոչ ինչն․ Յովբ՛՛ 155․
Ահա ըստ այսր կանխաւսոյ պատգամաց մեր Հօրս
մերոյ՝ և այժմ միւս կողմն երևելիքն գնացեալ
են 'ի Նոր խանն առ Պետրապատին Քեռահեայ
Ամիրայն՝ և Պետրապատին մահտեսի Յօհաննէս
Չելեպին ևս ամդ գտեալ՝ ըստ կարգի նստեալ
լուիկ իմն՝ քանի մի վայրկեան ամենեքին իսկ ան-
խօս, միմեանց ակնարկեալ՝ բանալ զդուռն բանի,
զի գիտէին զպատկառելի բանս կարծեալ գիտնոց
իւրեանց՝ անվայելչականս յորդութէ իւրեանց
խօսել․ մանաւանդ՝ որոց ուղղափառութէ քարոզիչս
ձկտին երևիլ․ և ապա կամայ ակամայ ամբաստա-
նելով պհամարեալ գիտնոց իւրեանց՝ խոստովա-
նեալ են թէ բնաւ ին ոչ կամին գալ և երևիլ, և
ոչ երբէք յանձն առնուն դէմ յանդիման ձեր
ելանել, և ամենեքին չունին ինչ երես՝ առ երեսս
ձեր խօսիլ, և այլն և այլն․ պատրաստ եմք ասեն
'ի գանս 'ի բանտս և 'ի մեռանել և այլն և այլն․
Այս զայս լուաք 'ի Պետրապատին Քեռահեայ
Ամիրայէն 'ի Նոյեմբերի 26․

Ն․ Այս զի անտանելի եղև մեզ այս յետին բանք

նոցին՝ ոչ կամիլ գալ առ մեզ և տալ պատասխանի
խնդրոյ մերում. յորմէ բրթմնջիւն ծագեցաւ 'ի
մէջ ժողովրդոց՝ մինչև հասանիլ յականջս մեր.
թէ էր արդեօք կասեցաւ յընթացից այս բարի
առաջադիմութե̅. մանաւանդ՝ այլ ը̅ այլոյ թարգմա_
նեալ լինէր 'ի մէջ հասարակութե̅ բան և խորհրդ-
մեր, որ յառաջին ժողովմն. և առ ոչ գիտելոյ նց̅
զերին ստուգութի̅՝ յուզէին 'ի նմ̅ ալէք կարծեքա_
կան բանից. զայս տեսեալ մեր՝ խորհրդով ազգա_
պէտ ամիրայից արժան համարեցաք յիւրաքանչիւր
էսնաֆէ խառն յերկուց կողմանց զորս խոհա_
կանս կոչել 'ի մայր սբ̅ Եկեղեցին՝ և առ նմ̅ ևս
խօսիլ, զորս միանգամ խօսեցեալ էաք 'ի քանի մի
նուագս՝ առ երևելիս միւսոյ կողմանն, ոպ̅ զի՝
նոքօք կարասցուք յունիկն ամ̅ցուն հաստատել
զստուգութի̅ դարձուածոցն առ 'ի փարատել 'ի
մտաց հասարակութե̅ զայլ ընդ այլոյ տարադէպ
կարծեքական բանսն. և այս վերջին ժողով եղև
'ի դեկ" 12. ուր գումարեալքն էին 'ի գլխաւոր
էսնաֆից՝ ոգիք աւելի քան զհարուն միայն 'ի
նոցանէ. բաց 'ի մերայնոց և 'ի ներկայ գտանե_
ցեալ վարդապետացն մերոց և քհնյից, առ որս
յատենաբանութե̅ մերում փոքր մի ընդարձակա_
գոյն խօսեցաք, զոր խօսեցաքն 'ի ժողովն ղուրու_
չէշմէյու՝ զոր երկրորդել աստ ձանձրոյթ բերէ
խոհական ընթերցողաց. այլ 'ի լսել նց̅ զամ̅ ըղ_
բանսն պարզօրէն, քանզի՝ այլազգական բառի_
խօսեցաք առ 'ի լինելոյ դիւրիմբռնելի ամ̅ մտաց,
որք միաբան աղաղակէին, մանաւանդ 'ի միւս կողմա
նէ գտանեցեալքն 'ի ժողով անդր, թէ իրաւունս

ունիս հայր մբ ՚ի լինիլդ ձեռնարկ յայս առա-
ջարկութի, ըստորում պարտական եմ զօգուտն
ազգին խնդրել, և նոքա անխռովի փախուստ տան.
երդմնեցուցաք զնս չառնել կեղծաւորուի, այլ
զճշմարիտն ասել առաջի այ և հրեշտակաց և
մարդկան գումարելոց, նոքա առաւել քան զա-
ռաջինն զնոյն բան աղաղակէին ջերմեռանդութբ՝
մինչև արտասուել ոմանց ՚ի կսկծանաց սրտին.
ապա և մեք պատուիրեցաք նց քարոզել (զոր միան-
գամ լուան ՚ի բերանոյ մերմէ.) այլոց յէսնաֆէ
իւրեանց եղելոց՝ որք չէին անդր ներկայ. և ար-
ձակեցաք օրհնութբ.

Որք գնացեալ՝ իւրաքանչիւր էսնաֆի առանձին
ժողով արարեալ են ՚ի մէջ իւրեանց՝ և զլուծելոյն
՚ի մէնջ ծանուցեալ են անթերի. ապա յետ այնո-
րիկ յամ էսնաֆից միանգամայն գումարեալ ոգիք
անդր քան զերիս հարիւրս, ոչ ՚ի խռովութե սակս՝
այլ բարեպաշտութե ոգւով. ոպ զի՝ կարասցեն հա-
ճանեցուցանել զմիտս կարդացողաց իւրեանց,
որք փախուստ տային ՚ի խօսելոյ, վսյ՝ օր յառաջ
ժամ եդեալ ՚ի դեկ՝ 18. գնան յեկեղեցին լա-
տինացւոց անուանեալ մբ Երրորդութի. ՚ի խոր-
հել անդ, բայց ՚ի սադրելոյ փախստէից՝ վարեն
զնս արտաքս սպասաւորք եկեղեցւոյն, և այս գործ-
կարեվէր խոցեաց զսիրտ գումարելոցն, որք ի-
բաւամբ տրտնջէին թէ՝ յորժամ նուէրս պա-
հանջեն ՚ի մէնջ՝ եկեղեցին ձեր է ասեն. և միայն
յայս նուագ ՚ի պահանջել հարկին կամէաք խոր-
հուրդ բարի առնել՝ արտաքսեն զմեզ յեկեղե-
ցւոյ, և քանզի՝ այնքան մեծ բազմութի մնաց ար-

տաքոյ . և անձրևն նեղէր 'ի վերուստ , անճարա-
ցեալ՝ գնան յուսումնարան իմն , ուրանօր ոչ կա-
րացեալ զետեղիլ՝ մտանեն 'ի տուն աթանաս ա-
գայինն . և 'ի սրահ տանն 'ի լինիլ ներկայ փախստէ-
իցն քառասնիւն չափ , սկսանի ժողովն խօսիլ առ
նոսա , դո՛ւք էիք՝ որք մտեալ 'ի տունս տունս ըղ
մեզ ուսուցանէիք նախատինս ծանունս դնե-
լով 'ի վր եկեղեցւոյն հայոց . և արդ՝ ահա կոչէ
զձեզ ազգն՝ ոչ իշխանութբ և բարկութբ , այլ սի-
րով և հանդարտութբ՝ ընդէր ոչ երթայք , եթէ
ճշմարիտ էին բանք ձեր՝ զոր խօսէիք , ընդէ՞ր
ոչ հանէք յերևան , զի յայտնի լիցի ճշմարտութին ,
ոչ ապաքէն և պաշտօնիդ ձերոյ պայման զայդ
պահանջէ , մեք աշխարհական մարդիկ եմք , և ըն-
տանեաց տր , ոչ կարեմք 'ի պատճառս ձեր անկա-
նիլ 'ի վտանգ , և այլ այսպիսի և առաւել քան
զայս ծանր բանք բազումք , բայց և ոչ մի ինչ
եզրակացութի , միայն ժամ դնեն յառաջիկայ կի-
րակէի օրն՝ տալ զվերջին պատասխանի խնդրոյ
ժողովոյն . և այսու՝ իբր թէ յուսացուցեալ զնս՝
արձակեն 'ի բաց , այլ փոխարէն գեղեցիկ խընդ-
րոյ նց կատարման , տես յորպիսի չարիս եղեն ձեռ-
ներէց . քանզի՝ ծանր ծանր զրպարտութիս եդել
ոչ միայն 'ի վր ժողովոյն իւրեանց՝ այլև 'ի վերայ
ազգին համայն՝ ամբաստան լինին զազգէն , առ-
ծայրագոյն գործակալս հզօր տէրութեն , որպ զի՝
ժողով գործեալ հայք կոխեցին զեկեղեցի մեր ,
և առաջադրեալ են նաև զպալատ դեսպանին կո-
խել և այլն , բայց 'ի զգուշանալ նոցա՝ և 'ի քննել՝
և յանկարծուստ 'ի գիշերի 'ի մէջ երրորդութեթի
եկե-

եկեղեցի մեր՝ որ 'ի պէտ օգուտ, մտեալ հարցու-
փորձ առնել՝ յայտնի եղեւ ստութիւն նոցա,
բայց այսու արարմամբ՝ զոգիս ուղղոյն ջանացին
դնել 'ի վտանգ, այլ ած պահեաց. ոպ յայտնի է
ամ բնակչաց քաղաքիս։ Ապա՝ զայսպիսի խար-
դախութիւն՝ մանաւանդ անգթութիւն նոցա
տեսեալ մեր՝ առ ժամս լռելն վարկաք նախա-
պատիւ. և ցայս վայր անցիցն պատմութիւն 'ի
տիպ արձանացուցեալ՝ ընծայեցաք օրհնեալ ազ-
գի մերում 'ի միամտութիւն, և որ ինչ զկնի այսր
լինիցին բանք, զայն ևս 'ի տիպ արձանացուցա-
նել ունիմք 'ի մտի՝ եթէ ան լիցի կամք.

основ. 1884 ... 1909 Тифл.
Библиотека Арм. Благотвор. О-ва на Кавк.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

[illegible]